ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆԸ՝ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ

Պետրոս Դեմիրճյան

Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Գր. Լուսավորչի 15
Էլ. հասցե՝ pdemirchyan@mail.ru
ORCID: 0009-0003-6265-4421
Հոդվածը ներկայացվել է 25.08.2023, գրախոսվել է 12.04.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-165

Ամփոփում

XIX դարի 80-ական թվականների բուռն ու բեղուն տարիներին ամենից առաջ ի հայտ եկավ երիտասարդ Եղիա Տեմիրճիպաշյանի հրապարակագրական ձիրքը: Իր հրատարակած պարբերականներում նա անդրադառնում է հայոց ազգային, հասարակական, կրոնական, գրական-մշակութային, կրթական-մանկավարժական և բազմազան այլ հարցերի ու խնդիրների: Դրանք արդյունք էին ոչ միայն Եղիայի անհատական ըմբռնումների ու նախասիրությունների, այլև նախ և առաջ ժամանակի պահանջի, ավելի ընդհանուր՝ մարդկային մտքի առաջընթացով պայմանավորված՝ կյանքի արդիական փոփոխությունների թելադրանքի, հնի ու նորի, դարն ապրածի ու ապագային միտված ծիլերի պայքարի:

Եղիա Տեմիրճիպաշյանը հանդես էր գալիս որպես բնության, ազգային թե մարդկության կյանքում **բարեշրջության** համոզված կողմնակից ու ջատագով: Պայքարելով առաջադիմության համար՝ նա տեսնում էր, սակայն, որ այն շատ դանդաղորեն է ընթանում: Շատ հաճախ բախվում է անհասկացողության կամ անհանդուրժողականության պատին: Գիտության՝ մարդու, բնության, հասարակության ու տիեզերքի մասին պատկերացումների ընդլայնումն իր հետ բերում է ոչ միայն դրական, այլև բացասական իրողություններ, երբեմն անդառնալի հետևանքներով, որը խորապես մտահոգում էր շատերին, այդ թվում նաև իրեն՝ Եղիային: Բայց խնդիրը միայն հայի կամ ազգի մէջ չէ: Ե. Տեմիրճիպաշյանն աստիճանաբար լայնացնում ու խորացնում է հարցադրումների շրջանակը՝ ներառելով ընդհանրապես մարդու և մարդկության արդի վիճակի և ապագայի, ճակատագրի խնդիրը: Վերջապես, ամենագլխավոր հարցի՝ «Ո՞ւր կ'երթանք: Ո՞ւր կ'երթայ Հայութիւնն. ո՞ւր կ'երթայ մարդկութիւնն», պատասխանը, ըստ էության, դեռևս անորոշ էր՝ «Չը գիտեմ»: Կան սոսկ ապագայի մշուշոտ կանխազգացողություններ՝ տագնապի և հուսալքության շեշտերով, որից ինչպես խոստովանում է Եղիան՝ «Հոգիս տրտում է ցը մահ...»:

Բանալի բառեր՝ Եղիա Տեմիրճիպաշյան, հրապարակագրություն, ազգ, քաղաքակրթություն, առաջադիմություն, Սահմանադրություն, հասարակություն:

Ներածություն

XIX դարի 80-ական թվականների բուռն ու բեղուն տարիներին ամենից առաջ ի հայտ եկավ երիտասարդ Եղիա Տեմիրճիպաշյանի հրապարակագրական ձիրքը: Իր հրատարակած պարբերականներում նա անդրադառ-

նում է հայոց ազգային, հասարակական, կրոնական, գրական-մշակութային, կրթական-մանկավարժական և բազմազան այլ հարցերի ու խնդիրների: Դրանք արդյունք էին ոչ միայն Եղիայի անհատական ըմբռնումների ու նախասիրությունների, այլև, նախ և առաջ, ժամանակի պահանջի, ավելի ընդհանուր՝ մարդկային մտքի առաջընթացով պայմանավորված՝ կյանքի արդիական փոփոխությունների թելադրանքի, հնի ու նորի, դարն ապրածի ու ապագային միտված ծիլերի պայքարի, որը ենթադրում էր քանդում և շինություն՝ հանուն ավելի լավ կյանքի: Բայց այդ ամենի մեջ Եղիայի համար կարևորվում էր նաև բարոյակա՛ն կողմը. նա ամենևին էլ անտարբեր չէր այն հարցադրման հանդեպ, թե, ի վերջո, բարի՞ էր արդյոք այդ **քանդումը**՝ թեկուզև հանուն ճշմարիտ նպատակի. «Կը խոստովանիմ ե՛ւ ես թէ բարի չէ՛ քանդումն: Այլ անխուսափելի է քանդումն. Եւ եթէ գործիք մ'եմ ե՛ս ալ այդ քանդման գործին, պատասխանատուութիւնն այլում կը պատկանի. - Ժամանակին, Յաւիտենականի՛ն»[1]:

Ներկա ժամանակի և ազգի վիճակի գնահատությունը

80-ականի սկզբներին Հայոց աշխարհի ու ազգի վիճակը չափազանց ողբալի ու տագնապալի գույներով էր ներկայանում Եղիային: Հրաժարեցումից հետո դարձյալ Հայոց պատրիարքական աթոռին վերադարձած Ներսես Վարժապետյանին ուղղած գրության մեջ նա ցավով արձանագրում էր այդ իրավիճակը՝ «...ամե՛ն առաւօտ եւ ամե՛ն երեկոյ Սատանան աչացդ առջեւ բերաւ Հայութիւնն, երկրի վրայ ցիրուցան անանուն Հայութիւնն, անտարբերութեամբ եւ անբարոյութեամբ մահանալու մօտ Հայութիւնն, նժդեհութեամբ եւ օտարասիրութեամբ սպառելու մօտ Հայութիւնն, անիշխանութեամբ եւ անմիաբանութեամբ իսպառ անհետանալու մօտ Հայութիւնն»[2]: Եվ դեռ՝ Նուպար-Շահնազարյան վարժարանը փակված, Հայաստանյայց եկեղեցու հիմքերը խարխլված՝ «Արարատեան աթոռն՝ հիւսիսային անգութ արծուին մագլաց մէջ. Կիլիկեան աթոռն՝ Յիսուսադաւ ճիզուիթաց ճիրաններուն մէջ. Երուսաղիմական աթոռն՝ անտարբեր պահանջատեարց ճանկերուն մէջ. Կոստանդնուպօլսոյ պատրիարքական աթոռն ալ վտանգի՛ մէջ»[3]: Հիրավի, այս տողերում դժվար է չտեսնել Խորենացու «Ողբ»-ի անմիջական արձագանքը՝ ներքին հարազատությունը Պատմահոր խոսք ու ոճին: Միաժամանակ, սակայն, Ողբ ու Տագնապից ծնվում է Հույսը՝ եկել է Ժամը մեծ բարեփոխումների... Ե. Տեմիրճիպաշյանի խոսքը նույնպես ողբերգականից կտրուկ շրջադարձ է կատարում դեպի ռոմանտիկական պաթոսը՝ «Փառաց ու բարձրութեան ու զօրութեան փրկաւէտ ժամն, այո՛, հնչած է նաեւ ընդհանուր Օս-

[1] Գրասէր Ատոմ 1884, 124-125:
[2] Առ Բարձրաշնորհ Տ. Ներսէս Վարժապետեան Հայոց պատրիարք 1883, 25:
[3] Առ Բարձրաշնորհ Տ. Ներսէս Վարժապետեան Հայոց պատրիարք 1883, 28:

մանեան հայրենեաց համար, - ոգևորությամբ գրում է նա: - Բարձրագոյն հրամանաւ բարենորոգմանց սկիզբն արդէն եղած է Օսմանեան պետութեան մայրաքաղաքին մէջ եւ Օսմանեան պետութեան յետին գիւղաքաղաքին մէջ: /…/ նիւթն ու միտքն իրարու ձեռք կը կարկառեն՝ յարդարելու համար Օսմանեան պետութեան համայն ժողովրդոց բարօրութիւնն»: Եվ այդ ամենի առաջին ազդակներից մեկը, ըստ Եղիայի, այն էր, որ «Հայոց հրաժարեալ պատրիարքն» իր գահին էր վերադարձվել, ընդ որում՝ «համակրութեան այնպիսի՛ մեծափայլ ցոյցերով՝ ոյց եւ ո՛չ Հայոց պատրիարքական աթոռակալ մ՚արժանացած էր մինչեւ ցայսօր»: Եղիայի միակ տրտմությունն այն էր, որ «միլիոն մը» չուներ «ազգային բարեկարգութեան գործին ի նպաստ՝ Հայոց պատրիարքին տրամադրութեան ներքեւ դնելու համար»[4]:

Իր խմբագրած «Գրական և իմաստասիրական շարժում» հանդեսի նույն համարի մեկ այլ հրապարակման մեջ աշխարհում կատարվող արդի ազգային-քաղաքական-կրոնական տեղաշարժերի մասին խոսելուց հետո Ե. Տեմիրճիպաշյանը շտապում է ընթերցողներին տեղեկացնել, որ «Հայոց հրաժարեալ Պատրիարքն /…/ Վսեմափայլ վատանց ոմանց կողմէն իբրեւ կասկածելի» Բ. Դրանը ներկայացվելուց և ապա իր պաշտոնում վերականգնվելուց ու «իբրեւ պետութեան բարձրագոյն պաշտօնատարաց իմաստագոյններէն եւ հաւատարմագոյններէն մին» վերաճանաչվելուց հետո ջանում է իր շուրջ համախմբել «նիւթապէս ու բարոյապէս ձեռնհաս ազգայիններն»՝ ազգային բարեկարգության գործը հաստատելու և առաջ տանելու նպատակով: «Երկանց, խորհրդակցութեանց ու ծրագրաց օրերուն մէջ ենք տակաւին, - գրում է նա, - եւ կը յուսանք թէ Գարնանամուտին կամ՝ մեզ համար քաղցրագոյն բացատրութեամբ՝ Հայկական ամանորին հետ պիտի տեսնենք գեղեցիկ խորհրդոց մարմնացումն ու մեր անձկագին ըղձից լրումն»[5]: Շատ կարևոր էր նաև «եկեղեցականաց մտաւոր մշակումն», որի նպատակը պիտի լիներ «Հայաստանեայց եկեղեցին կանգուն պահել, ժողովրդեան բարոյականին վրայ հսկել, ազգային լուսաւորութեան նպաստել՝ քարոզութեամբ, հրատարակութեամբ եւ անխոնջ գործունէութեամբ»[6]: Ցավում էր, որ «բարձր անհատութիւնք հազուագիւտ են եկեղեցական դասուն մէջ», ուստի և համոզված էր, որ «Պէտք է պատրաստել այսպիսի եկեղեցական դաս մը», և դեռ «ուրիշ շա՜տ բաներ», որ նշանակում էր, թե «Պէտք է պատրաստել ապագան, ի մի՛ բան»[7]: Հատկանշական է, որ **Եղիա Տեմիրճիպաշյանի համար սկզբունքային խնդիր էր ազգային միասնության գաղափարի իրագործումը,** ըստ որի՝ «Տփղիսեցիք ու Պոլսեցիք պարտէին

[4] Առ Բարձրաշնորհ Տ. Ներսէս Վարժապետեան Հայոց պատրիարք 1883, 30-32:
[5] Ժամանակակից պատմութիւն /Հարեւանցի ակնարկ/ 1883, 40-41:
[6] Ժամանակակից պատմութիւն /Հարեւանցի ակնարկ/ 1883, 42-43:
[7] Ժամանակակից պատմութիւն /Հարեւանցի ակնարկ/ 1883, 44:

միացնել իրենց ոյժերն՝ հայրենեաց իմացական ու տնտեսական զարգացման գործին, այսինքն **կենաց գործին** համար»[8]:

Ամփոփելով ասվածը՝ Եղիա Տեմիրճիպաշյանը եզրակացնում էր, որ, ի վերջո, «Անհուն գործ մ'է ազգային բարեգործութեան գործն»: Բայց միայն նվիրյալ անհատների ջանքերով բարդագույն այդ խնդիրը լուծել հնարավոր չէ: «Ո՜րքան բազմապահանջ է ժողովուրդն, - գրում է նա: - Այլ պարտի գիտնալ թէ **պահանջք** եւ **պարտք**՝ որք անբաժան են վաճառականաց տոմարներուն մէջ՝ անբաժան ըլլալ պարտին նաեւ ազգաց հսկահատոր տոմարներուն մէջ. պահանջկոտութիւն ու պարտաճանաչութիւն միատեղ գալով՝ կը փրկեն ժողովուրդներն»[9]:

«Գերազանցօրէն հակասական» համարելով ներկա սերնդին բաժին հասած ժամանակը[10]՝ Ե. Տեմիրճիպաշյանը միաժամանակ պնդում էր, թե հենց ժամանակն է առաջադիմության ամենամեծ տարրը: Ընդ որում՝ փոխվել է **փառքի** մասին արդիական պատկերացումը. «...փառաց նշանակութիւնն այսօր փոխուած է, - գրում է նա, - փոխուած ըլլալով մարդկան մտաւոր վիճակն ու փոխուած ըլլալով մարդկութեան **իտէալն**»: Եթե նախկինում այն հիմնվում էր «բիրտ զօրութեան, վայրագ կրօնամոլութեան, քաղաքական բռնապետութեան» վրա, ապա «Այսօր կը փառաւորուի նա՛ որ կ'աշխատի. փառաց այսօր իրաւունք ունի նա՛՝ որ իր մարմնոյն, ու մտացն, ու սրտին զարգացման կ'աշխատի. նա որ ընկերային ներդաշնակութեան եւ ազգային յառաջադիմութեան եւ մարդկային ազգին բարօրութեան կը նպաստէ՝ մշակելով իր միտքն, իր սիրտն, իր մարմինն»: Զարգացնելով իր միտքը՝ հետագա շարադրանքի մեջ Ե. Տեմիրճիպաշյանը, ըստ էության, ներկայացնում է **ազգային-սոցիալական-քաղաքական արդարության ու բարոյականության իր տեսլականը:** Ըստ այդմ՝ ճշմարիտ ու իրական փառքի է արժանի «Նա՛ որ կ'աշխատի բիրտ զօրութեան դէմ բարձրացնելու բարոյական զօրութիւնն. որ կ'աշխատի պատերազմական գործեաց դէմ բարձրացնելու խաղաղական արհեստական գործիներն. որ կ'աշխատի կրօնամոլութեան դէմ բարձրացնելու գիտութիւնն եւ գիտութեան վրայ հիմնուած անսուտ կրօնն. որ կ'աշխատի դիւանագիտութեան դէմ բարձրացնելու գիտութիւնն ընկերային. որ կ'աշխատի բարձրացնել արդարութեան ու խաղաղութեան օրէնքն՝ ընդդէմ խտրադիր օրինաց պատերազմածին»: Հատկանշական է, որ փառքի իրավունքը Եղիա Տեմիրճիպաշյանը չէր վերապահում միայն արտակարգ կարողությունների տեր, երևելի անհատներին, որոնց ծառայությունները, անշուշտ, անհամեմատ մեծ են, այլև, ըստ նրա, «փառաց արժան է ամե՛ն մարդ՝ որ կ'ընթանայ պարտուց անմոլար ճանապարհին վրայ. ամեն

[8] Ժամանակակից պատմութիւն /Հարեւանցի ակնարկ/ 1883, 41:
[9] Ժամանակակից պատմութիւն /Հարեւանցի ակնարկ/ 1883, 44:
[10] Երեսփոխանական ընտրութիւնք 1883, 92:

մարդ որ կը սիրէ, ամեն մարդ որ կ'ուսանի, ամեն մարդ որ կը խորհրդածէ, ամեն մարդ որ կը շարժէ բազուկներն եւ իր քրտամբք կ'ոռոգէ խոպան երկիրն»: Մի խոսքով՝ հասարակության բոլոր ազնիվ, արդարամիտ, ջանասեր, ազգի և մարդու առաջընթացին նվիրյալ անհատներն ու խավերը՝ «Սկսեալ մանուկէն՝ որ կը ջանայ պահել անթերի դաստիարակին պատուէրներն ու խղճամտօրէն պատրաստել իր բոլոր դասերն, մինչեւ քաղաքացին որ տիպար մ'է բարոյասիրութեան եւ ուսումնասիրութեան եւ ազգասիրութեան, եւ մինչեւ բնութեան գաղտնիքներն յայտնօղ ու տիեզերաց յաւիտենական օրէնքներն հռչակօղ գիտութեան վեհիմաստ վարդապետն...»[11]:

Ազգային առաջադիմության իրագործման ուղիներն ու նախադրյալները

Ազգի ու հասարակության վերափոխման, առաջադիմության իրագործման ճանապարհին գլխավոր ուժը, իհարկե, երիտասարդությունն էր: 70-ականի կեսերին՝ Ֆրանսիայից վերադառնալով, Եղիա Տեմիրճիպաշյանն ականատես էր եղել, թե ինչպես «նոր ոգին կը թափանցէր համակ եւ յառաջ կը մղէր Հայ երիտասարդութիւնն»: Առաջ էին եկել և արդեն հաջողությամբ գործում էին եռանդուն ու կարող անհատներ, որոնցից մի քանիսը Ներսիսյանական իր դասընկերներն էին. «Կոչեցեալ երիտասարդ եկեղեցական մը, Բարձրաշնորհ Տէր Ներսէս Վարժապետեան, կը տքնէր՝ բարձրացնելէ յետոյ վարժապետութիւնն ու սրբազան բեմբասացութիւնն Հայոց՝ Բարձրագոյն դրից վերածել ե՛ւ Հայոց Պատրիարքութիւնն. Երիտասարդագոյն դաստիարակ մը, Պարոն Մինաս Չերազ, իր **Ազգային դաստիարակութիւն** անուն նշանաւոր – ու կրնանք ըսել փառաւոր – մատեանով՝ կը յաւակնէր նորոգել ազգային լեզուն, ազգային գրականութիւնն, ազգային դաստիարակութիւնն. Իր պանծալի հայրենակից ու դասակից Պարոն Ռեթէոս Պէրպէրեան՝ գրաբարեան, ուրիշ գրաբարեան երիտասարդի մը՝ Պարոն Յակոբ Գուրգէնի հետ՝ կը ձեռնարկէր նոր եւ աշխարհիկ ուղղութիւն մը տալ ազգային կրթութեան»: Ու նաև Մամուրյանի և Իփեքճյանի շնորհիվ՝ «մանկավարժական կենսաւէտ սկզբանց կը ծանօթանար Հայ երիտասարդութիւնն», Հակոբ Պարոնյանը «փառաւորապէս կը շարունակէր **Մեղուն**, եւ՝ գուցէ բարձրագոյն պաշտօն՝ **քննադատութիւն** կ'ուսուցանէր Հայ ժողովրդեան»: Իսկ այդ ամենին ուղղություն տվողն արդեն տասնվեցամյա Ազգային Սահմանադրության «հզօր ու խորհրդաւոր ձայնն» էր, որ «աստուածոց լեզուով կը բարբառէր եւ կը գոչէր առ Հայ երիտասարդութիւնն. «Աշխատեցէք, ո՜վ դուք, յուսալից երիտասարդներ որ թերեւս լաւագոյն օրերու պիտի տեսնէք նշոյլն հեռուանց...»: Ոգևորված երիտասարդական «նոր ոգու» այդ հզոր շարժումով՝ Եղիան չէր կասկածում, որ ինչպէս «ճառագայթք կեդրոնէ մը բնականաբար

[11] Դպրոցասէր հայուհիք եւ դպրոցասէր սանուհիք 1883, 174-175:

կը բղխին ու կը սփռուին, /…/ մայրաքաղաքէս ի գաւառս պիտի ծաւալէին իմացականութեան լոյսն եւ բարոյական կենաց սկզբունքն»[12]:

Նման լավատեսության հիմքերից մեկն էլ հայի ազգային հոգեկերտվածքի, բնավորության, հային բնորոշ հատկությունների քաջիմացությունն էր: Իսկ դրանց մեջ թերևս առաջնայինը, ըստ Եղիայի, հայի գործնական խառնվածքն է. «Ի՛նչ որ ալ ըսուի, Հայ ազգին ամենամեծ հանգամանաց մին է **գործնականութիւնն**», - գրում է նա: Ընդ որում՝ «բացարձակապէս անժխտելի» իրողություն է «Հայոց գործունէութիւնն»[13]: Նա համոզմունքով արձանագրում էր, որ հայերը՝ «Այր եւ կին, նախնական ժամանակներէն մինչեւ այսօր, կ'աշխատին հայրենի հողին վրայ. ժրաջան, պարագաներէն ալ գիտէ Հայն օգուտ քաղել ընդհանրապէս»: Ավելի խորանալով հարցի քննության մեջ, Եղիան հավաստում էր, որ հայի ազգային այդ հատկությունները գալիս են նրա հնդեվրոպական արմատներից. «Հնդեւրոպական ցեղերու գործունէութիւնն եւ ուշիմութիւնն հաստատուած են աշխարհիս ամեն կողմանց մէջ, - գրում է նա: - Ուստի անտեղի է զարմանքն, որ կը յայտնուի մերթ Եւրոպացւոց կողմէն, Հայ ազգին **եւրոպական** բարեմասնութեանց նկատմամբ: Այս Ասիական ազգն նո՛յն ցեղին կը վերաբերի, յումէ սերած են՝ այսօր քաղաքակրթութեան յառաջապահներն եղօղ ազինք. նո՛յն է մայրն Հայկական եւ Ֆռանսական լեզուաց. նո՛յն կլիմային տակ ծնած են Հայոց եւ Եւրոպացւոց նախահարք»: Եղիան ընդգծում է, որ հայոց քաղաքակրթության արժեքները՝ դպրությունը, արվեստը, առևտուրը և այլն, ավելի ու ավելի ճանաչելի են դառնում եվրոպացիներին, հայտնաբերվում են նոր փաստեր և ապացույցներ, որոնցով «պիտի բարձրանայ մեր Արեւմտեան եղբարց համարումն ու պիտ'աւելնայ համակրութիւնն՝ իրենց սերակից Ասիաբնակ այս ազգին նկատմամբ»[14]: Իբրև իր խոսքերի հաստատում՝ նա նշում է, որ, օրինակ, Օսմանյան կայսրության մայրաքաղաքում ու գավառներում հայերի ձեռքով են մշակվում արհեստներն ու արվեստները, վաճառականության և հանրային կրթության ոլորտներում հայերն առաջ են անցել հույներից «Ասիական աշխարհին մէջ»: «Եւ այս ամենն՝ հաստատուած վիճակագրութեամբ՝ ի՞նչ կ'ապացուցանէ, եթէ ոչ Հայոց **գործունէութիւնն**, եւ Հայոց **գործնականութիւնն**»[15], եզրափակում է Ե. Տեմիրճիպաշյանը: Ահա թե ինչու, ըստ Եղիայի, հարուստ դրամատերերը «պիտի բանան արտադրութեան նորանոր աղբիւրներ, արհեստից եւ առեւտրոց առջեւ նորանոր դուռներ, հայրենի բերքերուն համար նորանոր շահաստաններ»: Քանզի համոզված էր, թե «Բազում դրամագլուխք՝ նիւթական ու բարոյական՝ այժմ կը քնանան»: Եվ դա առավել քան աններելի էր, որովհետև «քնոյ ժողովուրդ չէ

[12] Միացեալ ընկերութիւնք Հայոց 1883, 222-223:
[13] Գրասէր Ատոմ 1884, 118:
[14] Գրասէր Ատոմ 1884, 118-119:
[15] Գրասէր Ատոմ 1884, 120:

Հայն, այլ գործոյ»: **Դա փաստորեն ազգային կյանքի, տնտեսության, կրթության ու մշակույթի արմատական բարեփոխումների կոչ էր Եղիայի կողմից, ծրագրային նախադրույթներ՝ հանուն ազգային զարթոնքի իրագործման**: «Ժամ է ուրեմն ամփոփել ցիրուցան ոյժերն, - գրում է նա,- հաւաքել եւ արդիւնաւորել ժամանակէ մը հետէ թաղուած եւ անգործածութեան դատապարտուած դրամագլուխներն»: Բայց այստեղ է, որ ի հայտ են գալիս Ե. Տեմիրճիպաշյանի՝ Մարսելի առևտրական քոլեջում ուսանած տնտեսագիտական գիտելիքները: «Անշուշտ մեր փափագն այն չէ թէ բոլոր դրամագլուխք ի մի վայր գումարուին, եւ Հայ ազգն ուրիշ բան չըլլայ՝ բայց եթէ դրամատեարց ընկերութիւն մը», - զգուշացնում է Եղիան: Ըստ նրա՝ «Տնտեսագիտական առողջ սկզբունքներն անտեսած եւ ընկերակցութեան գաղափարին տարապայման ընդարձակութիւն մը տուած պիտ՚ըլլայինք, այսպիսի ընկերութեան մը վրայ խորհելով»: Ուրեմն ի՞նչ պետք էր անել՝ «Անհատական նախագործութեան ոգւոյն պէտք է թողունք ամեն ազատութիւն, - խորհուրդ է տալիս Եղիան, - այլ պէտք է «տնտեսութեան խտացուցիչ» եւ ազգային զարգացման փութացուցիչ՝ խնայութեան ու փոխատուութեան դրամատուններ ունենանք. պէտք է հոս թէ՛ գաւառաց մէջ, թէ՛ Եւրոպիոյ մէջ դրամատուններ եւ՝ եթէ հնար է՝ մեծ ազգային դրամատուն մ՚ունենանք, որպէս զի դրամագլուխք կարենան աւելի շահաբեր ըլլալ, որպէս զի ճարտար ձեռքերն ու հնարող միտքերն արդիւնաբեր կարենան ըլլալ...»: Եղիա Տեմիրճիպաշյանը գոհունակությամբ էր նշում, որ «Տնտեսական գիտութեան աւագ կարեւորութիւնն սկսած է Հայ ազգին մէջ զգացուիլ»: Ըստ նրա՝ այդ մասին էին վկայում Հայկական կրթարանի և Պերպերյան վարժարանի հայտարարագրերում այդ գիտության ներմուծումը, «Մասիսի» ու «Արեւելքի» էջերում ինքնուրույն ու թարգմանական տնտեսագիտական հոդվածների հրապարակումները, դասագրքերի տպագրությունը[16]: Սկսել էին հաստատվել «Եւրոպական տնտեսական կամ շահակցական ընկերութիւնք»՝ տարբեր երկրների ժողովուրդների ներկայացուցիչներով: Վերջապես, ոչ թե թղթի, այլ «գետնի վրայ», այսինքն՝ իրականորեն, հիմնվել էր նաև «**Արեւելեան տնտեսական միութիւնն**», որի նպատակն էր «Խնայութեան, տնտեսութեան վարժեցնել աշխատաւոր դասերն. անզգալապէս կալուածատէր ընել անստացուած մարդիկն. եղբայրութեան մեծ գաղափարն ե՛ւս առաւել ծաւալել եւ արդիւնաւորել»[17]:

Տնտեսականի հետ, սակայն, **ըստ Եղիա Տեմիրճիպաշյանի, ազգային առաջադիմությանը նպաստող ամենակարևոր ազդակներն են նաև կրթությունն ու գիտությունը, արվեստը, մշակույթն ու գրականությունը**: Բանավիճելով նյութական արժեքներ ստեղծող աշխատանքն առավել հա-

[16] Գրասէր Ատոմ 1884, 122-123:
[17] Ե. 1886, 130-131:

մարողների հետ՝ նա պաշտպանում էր նաև հոգեմտավոր արժեքներ ստեղծող անհատների աշխատանքը՝ որպես հասարակության և ազգի հարստության աճի հիմնարար աղբյուր: «Հարցո՛ւր յաւէտ կամ նուազ ուսեալ արհեստագործներուն՝ թէ ոչ միայն երկրի մը, հապա բոլոր երկրին, հապա բոլոր ազգաց հարստութիւնն ալ չաւելցուցի՞ն այն մարդիկ, որք աշխարհներ գտան երկրի վրայ եւ աշխարհներ երկնից մէջ, որք՝ մտածելով ու մատենագրելով՝ դիւրացուցին ազգաց յարաբերութիւններն, որք՝ մտածելով ու հաշուելով՝ օժտեցին մարդկութիւնն այնքա՜ն նորանոր գործիքներով ու մեքենաներով, որք մտածելով ու մարտնչելով՝ տարածեցին լոյսն հոս ժողովրդական դասուց մէջ եւ հոն վայրենի եղկելի ժողովրդոց մէջ»[18]: Ի վերջո, գրականությունն էր, որ հատկապես Սրբուհի Տյուսաբի «Մայտա», «Սիրանոյշ» վեպերի միջոցով հայ հասարակության մեջ բարձրացնում էր կնոջ ազատագրության խնդիրը, մի բան, որ, ըստ էության, հենց ժամանակի պահանջն էր և «զա՛յդ ահա Տիկին Սրբուհի Տիւսաբէ կ'ակնկալէր Հայ ազգն», այսինքն՝ «Իրաւունք ինչի՞. - լուսոյ, սիրոյ, կենաց՝ ի մի բառ»[19]:

Եղիա Տեմիրճիպաշյանի համոզմամբ՝ **ազգային վերելքի, զարթոնքի, առաջադիմության խնդիրը չի կարող արմատապես լուծվել առանց աշխարհի, այլ երկրների ու ժողովուրդների հետ բազմազան ու բազմաբովանդակ շփումների:** Այս տեսակետից նրա համար չափազանց մտահոգիչ էր, որ «Ռոպէրդ – Գոլէճի նախագահ Տօքդօռ Ճօրճ ՎՈՇՊԸՐՆ»՝ ամերիկյան նշանավոր շաբաթաթերթերից մեկում հայ ազգի և Հայաստանյայց եկեղեցու մասին գրած հոդվածի մեջ, նշում էր, թե յանկիները «ըզՀայս վայրենի ժողովուրդ մը կը կարծեն անգիր եւ անկրօն»[20]: Պակաս մտահոգիչ չէր Կովկասից եկած այն լուրը, թե պետական հրամանով փակվել էին ռուսահայոց բոլոր ուսումնարանները, որովհետեւ «Սինօդը կը մերժէր 1884 տարւոյ Փետր. 16*ի* օրէնքն»: «Ծնօղք եւ ուսանօղք արտակարգ կերպիւ յուզուած են այս փակման պատճառաւ», - ասվում էր հաղորդման մեջ: Բայց դա դեռ բավական չէր. նշվում էր նաև, որ «Պրոկուրօրն իր պաշտօնէն հրաժարելով բարձրագոյն հրամանաւ, յաջորդ կ'ունենայ Տփղիսի խստադաժան գրաքննիչ հայատեաց Մանաստիրցեվն, որոյ հայրն է Ռուս եւ մայրն Հայ»[21]:

Բացասականի հետ, սակայն, կային, իհարկե, նաև դրական տեղաշարժեր: Եղիա Տեմիրճիպաշյանը գտնում էր, որ Եվրոպա կամ Ամերիկա ուղարկված հայ երիտասարդները «ի հայրենիս վերադարձին իրենց ուսումնական հայրենեաց /այսինքն Եւրոպիոյ եւ Ամերիկայի/ ժողովրդոց բարքերն ու ձգտումներն յաւէտ կամ նուազ կը բերեն կը ներմուծեն Հայ ժողովրդեան մէջ»: Ընդ որում, հատկանշական է, որ նա որոշակիորեն ընդգծում էր, թե որ

[18] Տէմիրճիպաշեան 1886, 151:
[19] Սիրանոյշ 1885, 121:
[20] Ամսացոյց 1885, 53:
[21] Երկամսացոյց 1885, 90-91:

երկրից հատկապես ի՛նչ էր ներմուծվում հայ իրականություն: Ըստ այդմ՝ Ֆրանսիայից վերադարձող երիտասարդները «գեղեցիկ դպրութեանց», Իտալիայից՝ «գեղեցիկ արուեստից», Անգլիայից՝ «վաճառականութեան ու ճարտարութեան», Շվեյցարիայից ու Գերմանիայից՝ «մանկավարժութեան եւ իմաստասիրութեան», Ամերիկայից /ինչպես նշում էր փակագծում՝ «եթէ լինին»/՝ «պարզասիրութեան եւ օգտասիրութեան ճաշակ կը բերեն միասին»: Ու Եղիան համոզված էր, որ «կէս դարէ ի վեր ազգային յառաջադիմութիւնն այս կերպով կը բացատրուի գլխաւորապէս»[22]:

Եղիան ազգային հպարտության արժանի իրողություն էր համարում նաև օտար երկրներում վաստակած իրական ճանաչումն ու հեղինակությունը: «Երբ Հայ անունն եւրոպական մամլոյն մէջ կը տեսնուի՝ իբրեւ համանիշ տաղանդի եւ բարոյական արժանիքի, - գրում է նա, - Հայ հրատարակիչն անտարակոյս կը հրճուի եւ իր հրատարակութեան հարիւրաւոր ձայներով կը փութայ ջերմապէս խնդակցիլ այն ազգայնոց՝ որք յԵւրոպա կը պանծացունեն Հայութիւնն»[23]:

Այս իմաստով չափազանց ուշագրավ է նաև «Շարժումի» էջերում Եղիա Տեմիրճիպաշյանի՝ «սիրտ ի թնդւոջ» հրատարակած «Մեծաշուք Գուիտոն Իշխան Լուսինեանի» մի «սրտայոյզ» նամակը, որտեղ պատմվում է Փարիզի Լուսինյանների կալվածում աշխարհահռչակ Վիկտոր Հյուգոյի կյանքի վերջին մի քանի տարիներին դրկից հարևանությամբ /«վարձաբնակ տնակից»/ ապրելու և նրա հետ սերտ մտերմության մասին: Նամակագիրը, սակայն, շեշտում էր հատկապես այդ իրողության համազգային նշանակությունը, ցավ հայտնելով, որ Եղիայի «ոգին, սիրտն ու հանճարն ունեցող Հայ մի չգտնուեցաւ հոս, որ այս բացառիկ պարագայէն օգուտ քաղելով՝ աշխարհիս տարփողէր որ իւր անչափ ողբացած տիեզերահռչակ Հիւկոն Հայ զաւակաց օթեւանն ութ տարի իբրեւ հիւր սիրամեծար հանգչեր, հոն հրաշակերտներ արտադրեր եւ հոն իւր անմահ վեհազն հոգին իւր **աստուածացումն** /aphote'ose/ ընդուներ էր»: Գվիդոն Լուսինյանն առանձնահատուկ հպարտությամբ էր հիշատակում ֆրանսիական պարբերականների հրապարակումներն այն մասին, «թէ Քերթողահայրն Լուսինեան իշխանին եւ իշխանուհւոյն տունը կբնակէր, եւ այսպէս նորա անմահ անուան մշտայուշ լծորդեցին Լուսինեան անունն», միաժամանակ ավելացնելով, թե «յանհունս ուրախ լինէի եթէ այս չքնաղագիւտ առթով սիրելի Հայոց ազգիս անունն հռչակուէր, եւ ազգաց եւ ազանց զինքը նախանձելի հանդիսացուցանելով՝ Վիքթոր Հիւկոյին հետ զնա յաւերժայիշատակ կացուցանէր…»[24]:

---

[22] Ե. 1886, 174:

[23] Տիգրան Զուհաճեան եւ Մարտիկ Յակոբեան 1884, 119-120:

[24] Վիգդոռ Իւկո եւ Իշխան Լուսինեան 1885, 126-127:

Այդպես, Եղիա Տեմիրճիպաշյանը հենց «Շարժում»-ի ճակատին հրապարակում է նաև «մեծանուն ֆռանսացի գրադատ» Ֆրանցիսկ Սարսէի՝ իր մորաքեռորդի Ներսես Ներսեսյանին գրած նամակը, նույնիսկ վերջինիս «կամացն հակառակ», ընդգծելով, որ «Սառսէյի թղթոյն պատիւն՝ որքա՛ն սիրելի մօրաքեռորդւոյս նոյնքա՛ն կը պատկանի սիրելի ազգիս»[25]:

Հասարակության և անհատի փոխհարաբերության խնդիրը

Եղիա Տեմիրճիպաշյանի 80-ական թվականների հրապարակումներում գլխավոր շեշտադրում ուներ հասարակության և անհատի փոխհարաբերության խնդիրը ևս: Ընդ որում, այն դիտվում էր տարբեր կողմերից: Բանաձևելով, թե «Ներելի է ժողովրդեան վրիպիլ, այլ ներելի չէ Բանի՛ն քարոզիչներուն՝ վրիպանաց մէջ պահել ժողովուրդն», նա գրում է. «Հարստութիւնն արդիւնք է. եւ հարստութեան պատճառն է մարդն», բայց ժողովուրդը վրիպում է, երբ հարստությունը նկատում է «աւելի քան մարդն, առարկայն աւելի քան ենթակայն...»: Եվ ապա՝ «...մարդուս հարստութիւնն ու զօրութիւնն ու մեծութիւնն ի՞նչ բանի մէջ կը կայանան, եթէ ոչ իւր Բանին մէջ, իւր մտաց մէջ, իւր մտաց ու սրտին զարգացման մէջ»: Ըստ Եղիայի, նրանք, որ միայն նյութականը, դրամն են համարում հարստություն ու զորություն, պարզապես շփոթում են արդյունքը պատճառի և դրամը դրամագլխի հետ: Մինչդեռ բուն հարստության պատճառը մարդն է, ստեղծագործ անհատը, որ «հարստութիւն կ'արտադրէ ձեռքով ու մտքով, աշխատութեամբ ու գիտութեամբ»[26]: Ահա թե ինչու նա դավանում էր այն ճշմարտությունը, թե «Ազգի մը բոլոր անհատք /և առաջին հերթին ազգային բուն՝ հոգեմտավոր հարստությունն ստեղծողները – Պ.Դ./ պէտք է կարող ըլլան կանգուն քայլել եւ ոչ կորագլուխ...»[27]: Մյուս կողմից, սակայն, ըստ Եղիայի, ճիշտ չէ ազգային կյանքում ավելի կարևորություն ընծայել «անձանց քան հաստատութեանց»: Ընտրելով ազգային կամ կրոնական առաջնորդներին՝ ժողովուրդը չպետք է թաղվի անտարբերության մեջ և հրաժարվի ամեն իրավունքներից՝ «թողլով ընտրեալին ամեն գործ եւ ամեն պատասխանատուութիւն»: Այդպես, ժողովուրդն «ամեն բան առաջնորդէն կ'ակնկալէ դեռ ընդհանրապէս, Գաւառն ամեն բան Կեդրոնէն կ'ակնկալէ, Կեդրոնն ալ ամեն բան կ'ակնկալէ Բարձրագոյն Դռնէն: Չիք անհատական, տեղական, ընկերական գործողութիւն. չիք գործունէութիւն»: Ի վերջո, անցած 1885 թվականի ազգի վիճակի իր հետադարձ ակնարկը Ե. Տեմիրճիպաշյանն ամփոփում է, այսօրվա լեզվով ասած, **իշխանության ապակենտրոնացման, հասարակության մեջ անհատի դերի մեծացման և իրավունքների պաշտպանության** մասին հրաշալի ակորդով. «Եւ ահա կուգամ հռչակել թէ Հայոց մէջ այնքա՛ն կեդրոն, այնքա՛ն

[25] Ֆռանսիսք Սառսէ առ Տ. Ներսէս Ներսէսեան 1885, 141:
[26] Ե. 1886, 290-291:
[27] Կրօնք եւ Գիտութիւն 1885, 183:

վարչութիւն կայ որքան եկեղեցի, որքա՛ն զանգակատուն. կուգամ հռչակել թէ Աստուած այնքա՛ն կը փառաւորուի որքա՛ն անհատն ինքն իւր անձին վրայ վստահի, որքա՛ն Հայն աշխատի եւ իւր իրաւանց տէր կանգնի»[28]:

Քաղաքակրթության զարգացման ներկա փուլի գնահատությունը

Հոդվածից հոդված ընդլայնելով քննվող խնդիրների շրջանակը՝ Եղիա Տեմիրճիպաշյանը մի ընդհանրական ակնարկ է նետում քաղաքակրթության զարգացման ներկա փուլի վրա՝ փորձելով գնահատել նաև նրա ազդեցությունը ազգի ու անհատի, ժամանակակից կյանքի ձևավորման գործում: Ընդ որում, ակնարկը սկսվում է Եղիային հատուկ պատկերավոր մտածողության տպավորիչ մի դրվագով. «Եթէ մարդ թռչնահայեաց ակնարկ մ'այսօր աշխարհին վրայ ձգէ, - գրում է նա, - թռչնոյ ճիչ մ'ալ պիտ'արձակէ ցնծութեան՝ երկրի վրայ տեսնելո՛վ գրեթէ ա՛յնքան փայլուն կէտեր ո՛րքան երկնակամարին վրայ կ'երեւին երեկոյին: Այդ լուսաւոր կէտերն՝ աւելորդ է ըսել՝ քաղաքներն են, յորս կը ծաւալի գիտութեան լոյսն: Եւ երկրիս այս տեսարանն աւելի գեղապայծառ է թերեւս քան աստեղազարդ կամարին գիշերախառն այն տեսարանն»: Իսկ ո՞րն է, ըստ Ե. Տեմիրճիպաշյանի, երկնային ու երկրային այդ լույսերի միջև եղած տարբերությունը: Եղիան ունի նաև դրա բացատրությունը՝ եթե «Յերկինս՝ աստեղք անջա՜տ յիրերաց կ'ապրին, անջատօրէն անսահման տարածութեան մէջ կը թաւալին», ապա «Յերկրի քաղաքք համայնք կապուած են միմեանց՝ մարդկային իմացականութեան եւ աշխատութեան արդիւնքն եղող գետնաձիգ եւ օդաձիգ մետաղեայ նուրբ գիծերով, որք են **փոխադրութեան ուղիքն**. - ուղիք փոխադրութեան ապրանաց ու գաղափարաց»[29]: Ապա նա հիշատակում է քաղաքակրթության շնորհիվ ազգային ու հասարակական կյանքում կատարված էական բարեփոխումները՝ «ահա՛ կինն ուսեալ եւ ուսուցիչ, բանաստեղծ եւ իմաստասէր է, համալսարանաց վկայականներով բժիշկ եւ իրաւաբան է այսօր», մարդն ընդհանրապես՝ «ամենափոքր հիւլէէն մինչեւ ամենամեծ աշխարհներն իր քննութեան եւ կերպիւ իւիք իւր իշխանութեան ենթարկելով, ծանօթանալով իր ծագման, եւ՝ իր մեծութեան հետ՝ իր փոքրութեան ալ գիտակցութիւնն ունենալով, եղաւ մարդն՝ ի Մանդուայ կարապէն երանեալ էակն»[30]: Եվ ապա՝ քաղաքակրթության շնորհիվ, «Այն էակն, որ ստեղծագործութեան վրայ սքանչանալ իսկ ոչ էր կարող, ոչ միայն տիեզերաց մէն մի սքանչելիքներն ուրոյն կը դիտէ եւ կը դատէ կը գնահատէ, այլ եւ /…/ ինքն իսկ ստեղծիչ մ'է»[31]:

---

[28] Յետադարձ ակնարկ 1885, 199-200:

[29] Ակնարկ մը քաղաքակրթութեան վրայ 1886, 1:

[30] Ակնարկ մը քաղաքակրթութեան վրայ 1886, 3: Նշված համեմատությունը պարզաբանելու համար Ե. Տեմիրճիպաշյանը բերում է նաև Վիրգիլիոսի «Մշակականք»-ից համապատասխան մի հատված:

[31] Ակնարկ մը քաղաքակրթութեան վրայ 1886, 5:

Այդուհանդերձ, ըստ Եղիայի, քաղաքակրթությունն ինքնին դեռ բավարար չէ, ազգը, անհատը պետք է կարողանա ճիշտ և արդյունավետորեն օգտվել ժամանակի, քաղաքակրթության ընձեռած բարիքներից[32]: Քննադատական խոսք ուղղելով նրանց հասցեին, որոնք «Պատրիարքութեան ու Կաթողիկոսութեան համար արժանագոյն կը յամարին ա՛յն անձերն՝ որք աւելի գիրք հրատարակած են քան թէ գործ կատարած», Ե. Տեմիրճիպաշյանն այն համոզմունքն է հայտնում, թե «գրագիտական կամ ատենաբանական կարողութիւնն անբաւական է ժողովրդապետի մը համար»: Ըստ նրա՝ ճիշտը, արդյունավետը այդ «կրկին կարողութիւնների» համատեղումն է մեկ անձի մեջ՝ «ինչ որ հազուագիւտ է», սակայն այդ դեպքում է միայն, որ նման «անհատն, անտարակոյս, պէտք է բազմի բարձրագոյն աթոռին վրայ...»: Այդ կապակցությամբ պեղելով համաշխարհային պատմության մեջ եղած դասական օրինակները՝ Եղիան բացականչում է. «Պէրիկլէսի ծնունդն ունեցող անձ մը չը՞ պիտ'երեւի Հայ եկեղեցականութեան մէջ...»[33]:

Նույն հոդվածում Եղիա Տեմիրճիպաշյանը մեկ անգամ ևս անդրադառնում է նաև հայկական գավառների վիճակին՝ ահազանգելով, թե «Մերինին նման կրօնական ազգի մը մէջ, ուր առաջնորդն ամեն բան է եւ ամեն բան ընել կարող է, աւելի ցաւալի բան մը կա՞ միթէ քան բիւրաւոր ազգայնոց հայրենի հողին վրայ յաճախ իրապէս անառաջնորդ մնալն»: Նրա համոզմամբ՝ այդ վիճակն ուներ «կրկնապէս աղետաբեր արդիւնք»՝ կենտրոնից կտրված կյանքի անփոփոխությունն ու զանազան աղանդների և միսիոներական խմբերի /«Ամերիկացի քարոզչաց»/ աշխուժացումը: Իսկ որո՞նք էին առաջադրված հարցերի լուծումները. նախ՝ «Ի մայրաքաղաքիս դեգերօղ եւ հոն բոլորովին հաստատուելու համար ձեռնարկներ ընօղ /«պառկելու տեղ» հայթայթելու համար ընկերութիւններ կազմօղ/» եկեղեցականներին ուղարկել գավառները, և ապա՝ հատուկ հաստատություններում կարող առաջնորդներ պատրաստել գավառների և, ընդհանրապես, հայ ազգի համար: «Ահա՛ այս մեծ գործին վրայ պարտի խորհիլ Կրօնական Ժողովն իր Բարձրաշնորհ Նախագահին հետ», - եզրափակում է Եղիան[34]:

Ի վերջո, 1887 թվականի «նոր տարւոյն օրն», ինչպես ամեն «Անհատ եւ Ազգ», Եղիա Տեմիրճիպաշյանը ևս հարց էր տալիս իրեն՝ «Ի՞նչ կը սպասէ մեզ»: «Անհատական կամ անձնական տրամադրութեանց վրայ ճնշում ի գործ դնելով, - գրում է նա, - պիտի ջանամ պաղարեամբ նկատել ներկայն եւ նախատեսել ապագայն»: Ըստ այդմ՝ «Հայութեան ներկայն» նրան ներկայանում էր իրատեսական գնահատմամբ՝ որպես բանական և օրինաչափ փոփոխությունների մի կարևոր հանգրվան: Եթե նույնիսկ ամենապինդ մե-

[32] Առաջնորդական խնդիր 1886, 20:
[33] Առաջնորդական խնդիր 1886, 18-19:
[34] Առաջնորդական խնդիր 1886, 21-22:

տաղն է փոփոխություն կրում խոնավության ու ջերմության ազդեցությամբ, «ազգերն այդ ազդեցութենէն զե՞րծ պիտի մնային», հարցնում է Եղիան՝ եզրակացնելով, որ «Մարդկութիւնն՝ այսպէս՝ բնական օրինօք կը վարի»: Ի դեպ, դատողությունների այս շղթան հիմնվում էր ոչ միայն հասարակագիտական, այլ նաև առավել խորքային՝ իմաստասիրական գիտելիքների ու պատկերացումների վրա: Խոսելով նյութի հարատև զարգացման բնական օրենքի մասին՝ նա ընդգծում է, որ դա տեղի է ունենում ինչպես նյութի «յատկութեանց», այնպես էլ «**անհասանելի զօրութեան մը**» շնորհիվ /ընդգծումը մերն է – Պ.Դ./: Այդպես, ըստ նրա, «ամեն մէկ գիւտի հետ» /նշում է հաղորդակցության միջոցների զարգացումը, վաճառականության խթանումը, պատերազմների պատճառով ժողովուրդների տեղաշարժերն ու փոխազդեցությունները, տեխնիկայի զարգացումը և այլն/ փոխվում է նաև մարդը, որն «աւելի կը մօտենայ աստուածութեան, կամ պարզ բացատրութեամբ մը՝ աւելի կը մօտենայ կատարելութեան»[35]:

80-ական թվականների իր հրապարակագրության մեջ **Եղիա Տեմիրճիպաշյանը հանդես էր գալիս որպես գիտական, իմաստասիրական, գեղագիտական առաջադիմական մտքի նվաճումների համոզված պաշտպան ու քարոզիչ:** «…վա՜յ անոր, որ կը մարտնչի ժամանակին ոգւոյն դէմ[36]», - մի առիթով բացականչում է նա: Միաժամանակ գտնում էր, որ ամեն բան այդքան միանշանակ չէ. նոր ժամանակը, արդի դարը բարդ է և իր էության մեջ հակասական՝ «Դար մը՝ միանգամայն պղնձի, երկաթի, արծաթի եւ ոսկիի. դար մը՝ մարդկութեան նման ծեր եւ բնութեան նման կենդանառոյգ, - գրում է նա, - դար մը՝ որ երկրագունտն իւր ոտից տակ եւ երկինքն իւր ուսոց վրայ առած՝ կը քայլէ, փոխելով ովկէանոսներն ի գոլորշի եւ հին աստուածներն ի փոշի. իւր մատին ծայրով կը շարժէ նա հսկայ մեքենաներ, եւ իւր մատիտին ծայրով կը սարսէ հսկայ կայսրութիւններ. մրցման, ծայրայեղ յիմարական մրցման զմարդկութիւն կը հրաւիրէ իւր համատարած համաթափանց ակնարկն, եւ գթութեան եւ եղբայրութեան յորդոր կը կարդայ իւր ձայնն, որ սարսռեցուցիչ բան մ՚ունի որքան հմայիչ. /…/ ամենաքաղաքակիրթ երեւոյթին ներքեւ՝ ամենավայրենի բնութիւն մ՚ունի. կ՚աստուածացնէ Նիւթն, եւ յետոյ կ՚աղաղակէ - Նիրվանա՜, Ոչնչութի՜ւն…»[37]:

Բայց հակասությունների անվերջ թվացող այս շարքը արդյո՞ք արդի մարդուն պիտի մղի անհուսության ու հոռետեսության: Մի՞թե չկա լույսի որևէ շող մութ թունելի ծայրում: Ե. Տեմիրճիպաշյանը ոչ միայն համակարծիք չէ դրան, այլև մատնանշում է դրությունից դուրս գալու իրատեսական ելքերը: «Ես իմաստասիրաբար ներկայացուցի քաղաքակիրթ ընկերութեան վիճակն, ոչինչ ծածկելով, համառօտակի միացնելով ընդհանուր պատկերի

[35] Ե. 1887, 50-51:
[36] Ե. 1887, 228:
[37] Մեր դարն 1886, 138-139:

մը մէջ ինչ որ անջատ անջատ կը տեսնենք կենաց ընթացքին մէջ», - գրում է նա: Որպէս ելք հակասությունների նկարագրված իրավիճակից՝առաջարկում է «վայրենի մարդկութեան վիճակն» համեմատել «եւրոպական քաղաքակիրթ ընկերութեան վիճակին հետ»՝ հավատացնելով, թե «որքա՜ն տարբեր յայնժամ պիտի երեւի մեզ մեր ընկերութիւնն. իւր լաւ կողմերն, իւր լոյսերն յայնժամ պիտի տեսնենք մանաւանդ»[38]:

Ընդհանուր մարդկայինից անցում կատարելով ազգային կյանքի բարեփոխման խնդրին՝ Ե. Տեմիրճիպաշյանը «ժամանակի ոգի» հասկացության կողքին շեշտադրում է նաև «ազգային ոգու» առանձնակի կարևորությունը: «Երեք ուսմունք պարտաւորիչ ըլլալ պարտին յաւէտ մերինին նման ազգի մը մէջ մանաւանդ. **ազգային լեզու, ազգային պատմութիւն, ազգային-կրօնական կրթութիւն կամ քաղաքային կրթութիւն**», - գրում է նա: Իսկ ավելի ընդհանուր առմամբ, **Ազգային վարչությունը «ամէն բանէ առաջ պարտի ազգային ոգի կրել**, /…/ առաջին պարտքն ա՛յդ է. **հսկել իրապէ՛ս**՝ /…/ **ազգային դաստիարակութեան վրայ**» /ընդգծումները մերն են – Պ.Դ./[39]:

«Սահմանադրութիւնն ազգին օրէնքն է, ազգային վարչութեան կանոնագիրն է…»

Վերջապես, ազգային զարգացման, քաղաքակրթական առաջադիմության ճանապարհին, Եղիա Տեմիրճիպաշյանի համոզմամբ, բացառիկ էր Ազգային Սահմանադրության ընդունումը: «Հայութեան համար մեծ դարագլուխ մը կը համարուի 1860, թուական հաստատութեան ազգային Սահմանադրութեան», - ոչ առանց հպարտության հայտարարում է նա՝ հայության գլխավոր օրենքի ընդունման 25-ամյակի կապակցությամբ գրած հոդվածում: Ու թեև, ցավոք, այն բոլորի կողմից միանշանակ չի ընդունվել, սակայն արտակարգ կարևորություն ունի ազգային կյանքի բարեփոխման համար: Ե. Տեմիրճիպաշյանը, ըստ էության, ներկայացնում է հասարակական ընկալման տարբեր շերտերը, ի վերջո, խնդիրը քննելով **իրատեսական** հարթության վրա: Պատասխանելով «Ուրեմն ի՞նչ է Սահմանադրութիւնն» հարցին՝ նա գրում է. «Ոչ պարիկ է այն՝ որպէս կը հաւատայի, ոչ համադեղ մը՝ որպէս ոմանք կարծեցին, եւ ոչ հակաբուն հակազգային ու մահաբեր ինչ՝ որպէս այլք քարոզէին եւ դեռ կը քարոզեն: Սահմանադրութիւնն ազգին օրէնքն է, ազգային վարչութեան կանոնագիրն է՝ ազգային աւանդութիւններէն եւ Հայաստանեայց եկեղեցւոյն ծոցէն հանուած եւ ամենազարգացեալ ազգաց սահմանադրութեամբք բարեխառնուած: /…/ Օրէնքն առ Հայս իւր վերջին շրջանին մէջ կը մտնէ սոյն թուականին հետ. հաստատութեամբ ազգային Սահմանադրութեան, Հայ ազգն ալ՝ սոյն թուականին՝ կը մտնէ

[38] Մեր դարն 1886, 144:
[39] Ե. 1887, 240:

հետեւաբար քաղաքակրթութեան վերջին, բարձրագոյն շրջանին մէջ»[40]: Վերջապես, ի մի բերելով ամբողջ ասվածը, Ե. Տեմիրճիպաշյանը սահմանում է, որ «**Ազգային սահմանադրութիւնն՝ ազգային բարեշրջութեան արդիւնքն է**» (ընդգծումը մերն է – Պ.Դ.)[41]:

Եզրակացություններ

Եղիա Տեմիրճիպաշյանն ընդհանրապես հանդես է գալիս որպես բնության, ազգային թե մարդկության կյանքում **բարեշրջության** համոզված կողմնակից ու ջատագով: Նրա համար անհասկանալի և տարօրինակ էր, որ «ոմանք կը խրտչին, կը գայթակղին իսկ ի լուր այս բարեշրջութիւն անուան»: Ըստ Եղիայի՝ բարեշրջությունը պարզապես առաջադիմության հոմանիշն է, «նոր անունն է յառաջադիմութեան»:

Պայքարելով առաջադիմության համար՝ Եղիա Տեմիրճիպաշյանը տեսնում էր, սակայն, որ այն շատ դանդաղորեն է ընթանում: Շատ հաճախ բախվում է անհասկացողության կամ անհանդուրժողականության պատին: Գիտության՝ մարդու, բնության, հասարակության ու տիեզերքի մասին պատկերացումների ընդլայնումն իր հետ բերում է ոչ միայն դրական, այլև բացասական իրողություններ, երբեմն անդառնալի հետևանքներով, որը խորապես մտահոգում էր շատերին, այդ թվում իրեն՝ Եղիային: Բայց խնդիրը միայն հայի կամ ազգի մէջ չէ: Ե. Տեմիրճիպաշյանն աստիճանաբար լայնացնում ու խորացնում է հարցադրումների շրջանակը՝ ներառելով ընդհանրապես մարդու և մարդկության արդի վիճակի և ապագայի, ճակատագրի խնդիրը: Եվ վերջապես, ամենագլխավոր հարցը՝ «Ո՞ւր կ'երթանք: Ո՞ւր կ'երթայ Հայութիւնն. Ո՞ւր կ'երթայ մարդկութիւնն»: Պատասխանն անորոշ է՝ «Չը գիտեմ»: Կան սոսկ ապագայի մշուշոտ կանխազգացողություններ՝ տագնապի և հուսալքության, մինչև անգամ ինքնադատապարտման շեշտերով. «Կը զգամ որ չենք երթար դէպ ի լաւն, ո՛չ իբրեւ Հայ, ո՛չ իբրեւ մարդ (առաջին եզրն աւելորդ չէ՞): Հոգիս տրտում է ցը մահ...»[42]:

Օգտագործված գրականություն

Գրասէր Ատոմ 1884, Դիցուհին ի բանտի, Երկրագունտ, թիւ 3, էջ 124-127:
Գրասէր Ատոմ 1884, Ազգային յատկութիւնք եւ ազգային դրամատունք, Երկրագունտ, թիւ 3, էջ 118-124:
Ե. 1886, Արեւելեան տնտեսական միութիւն, Երկրագունտ, թիւ 3, էջ 130-133:
Ե. 1886, Նոր դասագիրք Թուագիտութեան /Գ. տպագրութիւն/, Երկրագունտ, թիւ 4, էջ 173-174:
Ե. 1886, Առաջնորդող դասն ո՛րն է, Երկրագունտ, թիւ 7, էջ 289-297:
Ե. 1887, Ի՞նչ կը սպասէ մեզ, Երկրագունտ, թիւ 1-2, էջ 49-53:
Ե. 1887, Եկեղեցական բարեկարգութիւն, Երկրագունտ, թիւ 5-6, էջ 226-230:

[40] Սահմանադրութիւն 1886, 98:
[41] Սահմանադրութիւն 1886, 102:
[42] Առաջին խօսք 1887, 3:

Ե. 1887, Տուրքի խնդիրն եւ ազգային դաստիարակութիւն, Երկրագունտ, թիւ 5-6, էջ 239-240:
Տէմիրճիպաշեան Ե. 1886, Կրթական խնդիր, Երկրագունտ, թիւ 4, էջ 145-160:
Անստորագիր /Տէմիրճիպաշեան Ե.,/ Ակնարկ մը քաղաքակրթութեան վրայ, 1886, Գրական և իմաստասիրական շարժում /ԳԻՇ/, տետր առաջին, էջ 1-6:
Ամսացոյց 1885, ԳԻՇ, տետր երրորդ, էջ 52-56:
Առ Բարձրաշնորհ Տ. Ներսէս Վարժապետեան Հայոց պատրիարք 1883, ԳԻՇ, տետր Բ., էջ 24-32:
Առաջին խօսք 1887, ԳԻՇ, տետր առաջին, էջ 1-3:
Առաջնորդական խնդիր 1886, ԳԻՇ, տետր երկրորդ, էջ 17-22:
Դպրոցասէր հայուհիք եւ դպրոցասէր սանուհիք 1883, ԳԻՇ, տետր Թ., էջ 169-176:
Երեսփոխանական ընտրութիւնք 1883, ԳԻՇ, տետր Ե., էջ 91-95:
Երկամսացոյց 1885, ԳԻՇ, տետր հինգերորդ, էջ 89-92:
Ժամանակակից պատմութիւն /Հարեւանցի ակնարկ/ 1883, ԳԻՇ, տետր Բ., էջ 38-44:
Կրօնք եւ Գիտութիւն 1885, ԳԻՇ, տետր տասներորդ եւ մետասաներորդ, էջ 179-185:
Մեր դարն 1886, ԳԻՇ, տետր ութերորդ, էջ 137-149:
Միացեալ ընկերութիւնք Հայոց 1883, ԳԻՇ, տետր ԺԲ., էջ 221-225:
Յետադարձ ակնարկ 1885, ԳԻՇ, տետր երկոտասաներորդ, էջ 198-200:
Սահմանադրութիւն 1886, ԳԻՇ, տետր վեցերորդ, էջ 97-103:
Սիրանոյշ 1885, ԳԻՇ, տետր եօթերորդ, էջ 117-125:
Վիգդօռ Իւկօ եւ Իշխան Լուսինեան 1885, ԳԻՇ, տետր եօթերորդ, էջ 126-129:
Տիգրան Չուհաճեան եւ Մարտիկ Յակոբեան 1884, ԳԻՇ, տետր վեցերորդ, էջ 119-120:
Ֆռանսիսք Սառսէ առ Տ. Ներսէս Ներսէսեան, ԳԻՇ, տետր ութերորդ, էջ 141-143:

ЕГИЯ ТЕМИРЧИПАШЯН – ПУБЛИЦИСТ

Петрос Демирчян

Резюме

Публицистический талант молодого Е. Темирчипашяна впервые проявился в 80-е годы XIX века. Он обращался к национальным, общественным, религиозным, литературно-культурным, учебно-педагогическим и другим вопросам, связанным с армянской реальностью. Они явились результатом не только индивидуальных предпочтений Е. Темирчипашяна, но и, прежде всего, были продиктованы временем и обусловлены прогрессом человеческой мысли, диктатом современных перемен в жизни, борьбой старого и нового.

Егия Темирчипашян выступал убежденным сторонником и поборником благотворных изменений в национальной и человеческой жизни. Борясь за прогресс, он сталкивался с непониманием или нетерпимостью, неприятием нового. Расширение представлений науки о человеке, природе, обществе и Вселенной имело не только положительные, но и отрицательные последствия, что вызывало у него глубокую обеспокоенность будущим человечества в целом и армянского народа в частности.

Ключевые слова – Егия Темирчипашян, публицистика, нация, цивилизация, прогресс, конституция, общество.

YEGHIA TEMIRCHYPASHYAN: PUBLICATION WRITER

Petros Demirchyan

Abstract

In the tumultuous and fertile years of 80s of the XIX century, the publishing talent of young Yeghia Temirchypashyan first emerged. In his published periodicals, he refers to Armenian national, social, religious, literary-cultural, educational-pedagogical and various other issues and problems. They were the result not only of Yeghia's individual understandings and preferences, but also, first of all, the demand of the time, more generally, the dictate of modern changes in life, the struggle of the old and the new, the old and the future-oriented sprouts due to the progress of human thought, Yeghia Temirchypashyan acted as a convinced supporter of nature, national and human welfare. Fighting for progress, he found, however, that it was moving very slowly. Too often it runs into a wall of incomprehension or intolerance. The expansion of scientific ideas about human being, nature, society and the universe brings with it not only positive but also negative realities, sometimes with irreversible consequences, which deeply worried many people, including himself, Yeghia. But the problem is not only among the Armenians or the nation. Ye. Temirchypashyan gradually broadens and deepens the range of questions, including the problem of the current state and future, destiny of man and humanity in general. Finally, to the most important questions "Where will we go?" Where will Armenia go? Where would humanity go?, the answer, in fact, was still uncertain: "I don't know". There are only vague premonitions of the future, with accents of anxiety and despair, from which, as Yeghia confesses, "My soul grieves for death...".

Key words – Yeghia Temirchypashyan, publication, nation, civilization, progress, constitution, society.